բուած մի անձի համար պատուաւոր կը լինէր, եթէ նա փոքր ի շատէ զոհել չը գիտէր, ուոճ. կի անբաւարար հանգամանքումը կամ հրաժարվել պաշտօնից, կամ ամբողջ տարին գիւղերում անցկացնել, առանց ուշ դարձնելու երկրորդական շահերին*)։

Երբ մի թեմական տեսչի հարցնում ես ի՞նչու այս ինչ գաւառում ուսումնարաններ չը կան, կամ եղածները փակուել են։ Կը պատասխանէ, թէ ուսուցիչներ չը կան**)։

Աւելի ուղիղ կը լինէր ասել, թէ ուսուցիչներ պատրաստելու գործարան չը կայ։

Ո՞րտեղ են պատրաստել ներկայ գիւղական ուսուցիչները։ Մեծ մասամբ Ներսիսեան ուսումնարանում ինչ տեղից դուրս են եկել երիտա-

---

*) Ի ա ն օ թ. թեմական տեսուչների մէջ գովելով պէտք է յիշել գեր. Ստեփան քահանայ Տէր Ստեփանոսեանին, որ ուժ հարիւր ռուբլի ռոճիկով թեմական տեսչի պաշտօնը շատ խղճմտանքով էր կատարում։ Երբ նա զգաց, որ այդ աննշան ռոճիկը բաւարարվելն անբաւական էր, հրաժարվեց տուշտօնից։ Այժմ Տփխիսի թեմական տեսուչը ստանում է 2000 ր. Երեւանինը 1400 ր. եւ ճանապարհի ծախս, Շուշունը 1000 ր.

**) Ի ա ն օ թ. Տաճկա—Հայաստանի համար խօսելն անդամ տուելորդ է. այնտեղ ուսումնարաններ ամենեւին չը կան։ Յաւալի է յիշել, որ մի քանի ընկերութիւններ զատ-